Կոմիտէի սկզբնական գործը եղաւ այն, որ կազմակերպեց քաղաքում և արուարձաններում (Բալախանում, Բիբի-Հէյբաթում, Սև և Սպիտակ քաղաքներում, Բինագադիում, Հայկական արուարձանում) թաղական ժողովներ, նախապէս բաժանելով ամբողջ շրջանը թաղամասերի։ Թաղական ժողովներում ընտրեցին թաղական հանգանակիչ մարմիններ, որոնց վրայ պարտականութիւն դրւեց ամսէ ամիս իւր թաղի հայ ժողովրդից անդամավճար ստանալ. սկզբները տուրքերի գանձումը թաղական մարմինների միջոցով յաջող էր ընթանում, բայց հետզհետէ նա թուլացաւ և վերջերս համարեա թէ հասարակութիւնից դրամ չէ գանձւում։ Այստեղ պիտի յիշատակենք մի մխիթարական երևոյթ. անդամավճար—նւէրների մեծ մասը կանոնաւոր կերպով ստացւել է նաւթանքերի աշխատաւոր և բանւոր դասակարգից։ Նիրաաուների անուանացուցակը չի տպագրւում, որովհետև մինչև յունվարի 1-ը 1916 թ. այդ ցուցակները երկու զբաղոյկով (բրօշիւր) տպագրւած է, իսկ յունվարի 1-ից սկսած տպագրւել է „Արև„ և „Baku“ թերթերում պարբերաբար իւրաքանչիւր ամիս։ Տես 1916 թ. „Արև“-ի №№ 10, 19, 40, 41, 50, 62, 67, 75, 82, 87, 95, 106, 114, 126, 131, 149, 155, 159, 164, 174, 179, 190, 197, 227, 263, 277 և 280.

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Սկզբնական շրջանում կոմիտէի գործունէութիւնը բաւականի անսպասելի պայմանների մէջն էր դրւած։ Մի կողմից անսպասելի կերպով սկսւեց գաղթականների հոսանքը դէպի Բագու, որը յանկարծակի լինելով պատրաստութիւն չէր տեսնւած։ Անհրաժեշտ էր գաղթականներին ընդունելու գործը կազմակերպել, բնակարաններ գտնել, հիւանդներին զատել, բժշկական խնամք տանել, տաք սնունդ տալ,

սպիտակեղէն, հագուստ պատրաստել, աշխատանքի ընդունակների համար գործ գտնել, անցագիրների խնդիրը կանոնաւորել և այլն։ Միւս կողմից անհրաժեշտ էր անմիջապէս սպիտակեղէն պատրաստել որբերի համար և Էջմիածին ուղարկել, որբեր բերելու և Բագուում տեղաւորելու համար կարւոր պատրաստութիւններ տեսնել։ Բացի այդ անկարելի էր անուշադիր թողնել և Էջմիածնում կուտակուած գաղթականների խնդիրը, ուստի կարիք զգացուց իւրաքանչիւր յետևից 2 բժշկա-սանիտարական խմբեր, դեղեր ուղարկել Էջմիածին, նոյնպէս և մի վագոն բրինձ և այլ մթերքներ։ Բնական է, միաժամանակ այդ բազմատեսակ գործունէութեան երևան գալը չէր կարող որոշ սիստեմի ենթարկուել և անպայման կապուած էր թերութիւնների հետ։ Ժամանակի ընթացքում միմիայն, նա փոքր ի շատէ կանոնաւոր ընոյթ ստացաւ։

Կոմիտէի գաղթականներին հասցրած օգնութիւնը սկզբից ց 1 յունվար 1917 թ. արտայայտուել է այլ և այլ ձևերով, որոնցից գլխաւորները կը յիշատակենք։

1) Սանիտարական խմբեր և ներկայացուցիչներ.
2) Դասաւորման կայան (сортировочный пунктъ).
3) Ցանձնաժողովներ.
4) Բնակարան, հագուստ, անկողին և այլ պիտոյքներ.
5) Ճաշարան.
6) Որբանոցներ.
7) Դպրոց.
8) Հիւանդանոց.
9) Նպաստ դրամով.
10) Նպաստ ռուս գաղթականներին.
11) Վիճակագրութիւն.
12) Աշխատանքի բիւրո
13) Արհեստանոց.
14) Գաղթականների վերադարձը.
15) Կառավարութեան վերաբերմունքը։

Իւրաքանչիւր հիմնարկութեան, կամ գործի համար կոմիտէի անդամների ղեկավարութեամբ կազմուեցին մասնաժողովներ, ուր մտնում էին բացի կոմիտէի անդամներից և դրսից հրաւիրուած ոյժեր, որոնք ղեկավարելով կոմիտէի որոշումներով աւտոնոմ կերպով տանում էին գործը։ Այժմ իւրաքանչիւր հիմնարկութեան կամ ձեռնարկութեան մասին համառօտ տեղեկութիւններ հաղորդենք։

I. Սանիտարական խմբեր եւ ներկայացուցիչներ.

1915 թ. օգոստոսի սկզբներին, ինչպէս վերև յիշատակեց, կո-

միտէն աշխատեց ոյժերը ներածին չափ օգնութեան ձեռք մեկնել Էջմիածնում կուտակուած գաղթականներին։ Իրար յետևից ուղարկեցին 2 սանիտարական-բժշկական խմբեր։ Բացի բժշկական օգնութիւնից պիտի աջակցէին և սննդատու կայաններ կազմակերպելուն։

Բացի մասնագէտներից անհրաժեշտ էր և այլ ոյժեր ուղարկել Էջմիածին, քանի որ այդտեղ կուտակուած հաղարաւոր գաղթականների բազմատեսակ կարիքներին անկարող էր Էջմիածինը իւր ոյժերով բաւարարութիւն տալ։

Կոմիտէի կոչին առաջին արձագանգ տուողներից մէկը եղաւ Գրիգոր Աղաջանեանը, որը թողնելով իւր պաշտօնը անձնուիրաբար նեռեց իրան արհաւիրքի և տանջանքների միջավայրը։ Գ. Աղաջանեանը առանց դադար առնելու ամենայն անձնուիրութեամբ աշխատել է գաղթականների մէջ, կազմակերպելով սնունդ բաժանելու գործը։ Թշուառ եղբօր, քրոջ վիճակը թեթևացնելու միտքը նրան այնքան է կլանում, որ նա իւր հանգիստը մոռացած գիշեր ցերեկ աշխատում է, ապա վարակելով բծաւոր տիֆով վախճանուում է մեծ ցաւ պատճառելով իրան ճանաչողներին։ Կոմիտէն անկեղծ երախտագիտական զգացմունքից դրդուած որոշել է Գ. Աղաջանեանի գերեզմանի վրայ քար դնել։

Ոյժեր ուղարկել գաղթականական վայրերը կոմիտէի գլխաւոր նպատակներից մէկն է եղել, սակայն կոմիտէն չի կարողացել իւր դիտաւորութիւնը ցանկալի չափով կատարել, ոյժերի բացակայութեան պատճառով։ Կոմիտէն 1915 թ. հոկտեմբերին ուղարկել է Էջմիածնի պատճառով։ Կոմիտէն 1915 թ. հոկտեմբերին ուղարկել է Էջմիածին իբրև ներկայացուցիչ Ն. Զաբագեօղեանին, որը մտնելով Էջմիածնայ Եղբայրական Օգնութեան յանձնաժողովի մէջ աշխատել է և վարել գաղթականական գործը մինչև 1916 թ. վերջերը։

2. Դասաւորման կայան.

Կոմիտէն որոշեց գաղթականներին տեղաւորել Հայկաւանում, հետևեալ հանգամանքները. ա) Հայկաւանը աչքի առաջ ունենալով հայկական վայր է, բ) քաղաքից առանձնացած է, որ նշանակութիւն ունէր գաղթականներին ազատ պահելու քաղաքի բացասական ազդեցութիւնից։ Իսկ միւս հանգամանքների մասին բնակարանների բաժնում հաղորդուած է։ Գաղթականները Բագու հասնելուն պէս անմիջապէս Հայկաւան չէին ուղարկուում հետևեալ պատճառով։

Դ նկատի առնելով, որ նորեկ գաղթականների մէջ միշտ լինում էին հիւանդներ, որոնք ապրելով առողջների հետ կարող էին վերջիններիս վարակել՝ կոմիտէն քաղաքային ինքնավարութեան հետ միասին նպատակայարմար գտան նորեկներին զետեղել ժամանակա-

ուրապէս Հայկաւանից դուրս քաղաքում գտնուող մի շինութեան մէջ։ Նորեկ գաղթականները երկաթուղուց անմիջապէս փոխադրւում էին այդ շինութիւնը («Ալօն») ուր քաղաքային ինքնավարութեան հաշւով մի շաբաթ ապրում և խնամւում էին։ Մի շաբաթից յետ փոխադրւում էին Հայկաւան, իսկ հիւանդացածներին ուղարկում հիւանդանոցը։ Այդ շինութեան մէջ ապրողներին կոմիտէն իւր հաշւով աւել է և սպիտակեղէններ։

3. Ցանձնաժողովներ.

Վերև յիշեցինք, որ իւրաքանչիւր գործի համար կազմւեց առանձին յանձնաժողով. տնտեսական, որբանոցի, դպրոցական, հիւանդանոցի, աշխատատու և այլն։

Դոցանից ամենածանր պարտականութիւնը կրում էր տնտեսական յանձնաժողովը, որը պիտի հոգար բնակարանների, հագուստի, ուտելիքի և այլ կարիքների մասին Հայկաւանում ապրող գաղթականների։ Որովհետև տնտեսական յանձնաժողովը իւր գոյութեան ընթացքում որոշ փոփոխութեան է ենթարկւել, ինչպէս և գործելակերպը, ուստի այդ յանձնաժողովի մասին համառօտ տեղեկութիւն է տրւում։ Գաղթականների Բաղու հասնելուն պէս կոմիտէն նոցա հոգատարութիւնը յանձնում է Հայկաւանում տեղացիներից կազմւած մի յանձնաժողովի Մ. Ք. Տէր-Նահապետեանի նախագահութեամբ։ Յանձնաժողովի կազմի մէջ կոմիտէի կողմից մտնում է ա. Ն. Պատւականեան։ Նոյեմբերի սկզբին հ. նախագահը յայտնում է, որ յանձնաժողովի անդամներից մի մասը դադարել է աշխատելուց և ինքն դժւարանում է գործը վարել և կոմիտէն հրաւիրում է հեռացածներին և համոզում է գործը շարունակել։ Սորանից յետ տնտեսական յանձնաժողովը գործում է Յ. Ստեփանեանի նախագահութեամբ։

Վերատուգիչ յանձնաժողովը դեռ սկզբի ամիսները չժխտելով տնտեսական յանձնաժողովի անհրաժեշտութիւնը, առաջարկում էր գաղթականական գործի համար ունենալ և մի պատասխանատու վարձու լիազօր։ Յանձնաժողովի անդամները չնայած իրանց գործ դրած ահագին եռանդի և ժամանակի այնուամենայնիւ անկարող էին իրանց ամբողջ ժամանակը նւիրել գործին, իսկ հետևանքը այն էր լինում, որ գաղթականական գործը տուժում էր։ Կոմիտէն որոշեց 1916 թ. մայիսին հրաւիրել լիազօրի պաշտօնով պ. Մ. Տէր-Յովհաննիսեանին, որը վարեց գործերը մինչև նոյեմբեր 1916 թ.

Լիազօր նշանակւելուց յետոյ տնտեսական յանձնաժողովը իւր գործունէութիւնը դադարեցրեց։

4. Բնակարան, հագուստ, անկողին, կահ կարասիք, վառելիք, ամանեղէն։

Մեծ դժւարութիւնների կը հանդիպէին գաղթականները բնակարանների վերաբերմամբ, եթէ Հայկաւանի հայ հասարակութիւնը իւր ջերմ աջակցութիւնը ցոյց չտար։ Քաղաքում դժւար էր 2000-ից աւելի գաղթականների համար բնակարաններ գտնել, բացի այդ սա կապւած էր մեծ ծախքերի հետ և ամենագլխաւորը դժւար էր քաղաքի մի շրջանում (բայօն) կենդրոնացնել գաղթականներին, որը անհրաժեշտ էր օգնութեան գործը կանոնաւոր կազմակերպելու համար։ Հայկաւանի հայ հասարակութիւնը այդ խնդրում սիրով ընդ առաջ եկաւ և բնակարանների մի մասը նոյն իսկ ձրիաբար յատկացրեց գաղթականներին։ Տնատէրերից ոմանք մինչև այժմ էլ վարձ չեն ստանում։ (23 բնակարան, բաղկացած 47 սեն.)։ Կոմիտէն քաղցը պարտականութիւն է դնում իւր ջերմ շնորհակալութիւնը յայտնելու Հայկաւանի հայ հասարակութեան այն անդամներին, որոնք կարճ կամ երկար ժամանակով իրանց բնակարանը ձրիաբար յատկացրել են գաղթականներին։

Բացի յարմարութիւններից գաղթականներին Հայկաւանում կենդրոնացնելու կոմիտէն աչքի առաջ է ունեցել կառավարութեան դրած պահանջը. Բաղուում արգելւած է եղել գաղթականներին ապրել։ Դրա մասին իւր տեղը տեղեկութիւն կը տրւի։

Այժմ գաղթականները գտնւած են մօտ 93 զանազան բնակարաններում, (բաղկացած 179 սեն.) 3-ը հանրակացարան է։ Բացի բնակարանից գաղթականներին տրւել է որոշ չափով հագուստ, անկողին, սպիտակեղէն, ամանեղէն (ջրի տակառ, դոյլ, կաթսայ, պնակ, գդալ և այլն), խոիրներ, վառելիք, նաւթ, տաք ջուր և այլն։

5. Ճաշարան.

Հայկաւանում գոյութիւն ունէր մի ճաշարան, որը պահում էր քաղաքային ինքնավարութիւնը պահեստի զինուորների ընտանիքներին ճաշ մատակարարելու նպատակով։ Երբ Բաղու են հասնում գաղթականները, Հայկաւանում կազմւում է գաղթականական յանձնաժողովը, որը մտնում է քաղաքային Հայկաւանի ճաշարանը կառավարող բարեկարգիչ մասնաժողովի կազմի մէջ և միացեալ ոյժերով նոյն ճաշարանից ճաշ են բաց թողնում թէ գաղթականներին և թէ պահեստի զինուորների ընտանիքներին։

Սկիզբը քաղաքն երկիւղ կրելով համաճարակից և ի նկատի առնելով, որ գաղթականների թիւը մի քանի հարիւրի է հասնում ծախսերի պատճառով

Սկիզբը քաղաքն երկիւղ կրելով համաճարակից և ի նկատի առնելով, որ գաղթականների թիւը մի քանի հարիւրի է հասնում ծախսերի պատճառով

քերը ինքն է հոգում, սակայն կարճ միջոցից յետոյ այդ նպաստը դադարեցրեց և ամբողջ ծանրութիւնը ընկաւ կոմիտէի վրայ, միայն պահեստի զինուորների ընտանիքներին տւած ճաշի արժէքը քաղաքը վճարում էր։ Ճաշարանական (տնտեսական) յանձնաժողովը գործի ղեկը իւր ձեռքը վերցնելով յարմարեցրեց և ընդարձակեց ճաշարանը։

Մինչև դեկտեմբերի 18-ը (1915) ճաշարանը ճաշ էր բաց թողնում թէ դրսի գաղթականներին և թէ որբանոցներին, սակայն այդ թւականից յետ որբանոցները զատւեցին ունենալով իրանց առանձին խոհանոցը։ Սկզբներում բաց թողած ճաշերի թիւը հասնում էր օրական 500-ի, ապագայում որբանոցներին տւած ճաշերի հետ միասին 1700 (որից որբանոցներին 253 ճաշ)։ Երբոր որբանոցները զատւեցին և գաղթականների մի մասը գործ գտնելով չօգտւեցին ճաշից, բաց թողած ճաշերի թիւը հասաւ 1250։ Բացի ճաշից, հացից, իւրաքանչիւրին տրւում էր շաբաթական 43 կ. իբրև յատկացած հացի, ջրի, նաւթի, սապոնի համար։ Սկզբնական շրջանում մի քանի անգամ բաղանիք է վարձւել, որպէս զի գաղթականները լողանան։

Ի նկատի առնելով, որ մի ճաշարան ունենալը ստեղծում է մի շարք անյարմարութիւններ, որ այդտեղ կուտակւում է մի քանի հարիւր ընտանիք, որ առողջապահական տեսակէտից պիտի ընդունել մի չարիք, կոմիտէն որոշեց բանալ մի երկրորդ ճաշարան։ Հայկաւանի եկեղեցու բակում շինւեց մի ընդարձակ ճաշարան, որը օգտագործւեց սկսած 1916 թ. մայիս ամսից։ Գաղթականները ի նկատի առնելով այլ և այլ անյարմարութիւններ վաղուց հարց էին բարձրացրել, որ ճաշի փոխարէն իրենց տրւի փող։ Կոմիտէն ընդունելով, որ ստացած շնչին փողով գաղթականները բաւականաչափ սննդարար կերակուրներ չեն կարող պատրաստել և բացի այդ յարմարութիւններ չունին կերակուր պատրաստելու և թէ մթերքները դժւարութեամբ կարող են ձեռք բերել, ուստի ճաշը փողի վերածելը կը լինի ոչ յօգուտ գաղթականների՝ մերժեց գաղթականների առաջարկը։ Մի առ ժամանակ անցնելուց յետոյ, երբ կոմիտէն նկատեց, որ գաղթականները յամառ կերպով ցանկանում են ճաշը վերածել փողի՝ որոշեց յունիսի 1-ից ճաշ չցանկացողներին տալ փող։ Կառավարութիւնը իւրաքանչիւր հասակաւորի համար (սկսած 5 տարեկանից) տալիս էր օրական 20 կոպ., իսկ փոքրահասակների (մինչև 5 տարեկանը) համար 10 կոպ. Գտնելով, որ այդ օրապահիկը Բագւում տղրոյների համար քիչ է, կոմիտէն իւր միջոցներից լրացրեց պակասը վճարելով իւրաքանչիւրին օրական 25—30 կոպ., համաձայն ընտանիքի կազմի. բաղմանդամ ընտանիքներին վճարելով 25-ական կոպ., սակաւանդամ ընտանիքներին 30-ական կոպ. Սակայն ճաշարանը չփակւեց և պահւեց ընտանոցա համար, որոնք փող չէին ցանկանում։ Ապագայում (դեկտեմբ.

1916 թ.), երբ ճաշ ստացողների թիւը աննշան էր (մօտ 120) և ճաշը անհամեմատ թանկ էր նստում, ճաշարանը փակւեց և մնացածներին էլ փող բաժանւեց։

Աւելորդ չենք համարում յայտնել, որ աշխատանքի ընդունակ տղամարդկանց սկզբի ամիսներն էր ճաշ տրւում, իսկ յետոյ կոմիտէն նրանց զրկեց ճաշից, առաջարկելով և յարմարութիւն տալով, որ իրանց աշխատանքով հայթայթեն իրենց սնունդը։

6. Որբանոցներ.

1915 թ. օգոստոսի սկզբներին Էջմիածնից լուր ստացւեց, որ վանքի բակում կուտակւել է 3000 որբ գաղթականներ և թէ որբերի թիւը գնալով աւելանում է և թէ որբերը հիւծուածութիւնից և հիւանդութիւնից տասնեակներով մահանում են։ Կոմիտէն իւր միջից ընտրեց որբախնամ յանձնաժողով և յանձնարարեց նրան կազմել նախահաշիւ և որբերի մի մասին Բագու փոխադրելու եղանակը մշակել։ Հատ նախահաշիւ իւրաքանչիւր որբի վրայ տարեկան ծախք պիտի լինէր 180 ռ. և որոշւած էր Բագու բերել 300 որբ սանիտարական գնացքով։ Շնորհիւ քաղաքների միութեան լիազօր Կիշկինի միջոցներով հնարաւոր եղաւ Բագուի քաղաքային սանիտարական գնացքը ուղարկել Էջմիածին։ Գնացքով ուղարկւեց որբերի համար սպիտակեղէն, հագուստ, մեծ քանակութեամբ մթերքներ և դեղեր։

Օգոստոսի 27-ին գիշերը սանիտարական գնացքը դուրս եկաւ Էջմիածնից 535 որբերով։ Թէպէտ որոշւած էր առողջ որբերին միայն վերցնել, սակայն փաստը ցոյց տւեց, որ այդ ցանկութիւնը անիրագործելի է։ Ճանապարհին 150 որբ յանձնւեց Ալէքսանդրապոլի կոմիտէին, 100-ը Դիլիջանի, 12 ծանր հիւանդներ մնացին Թիֆլիսում և Ճանապարհին 4-ը մեռան հիւանդութիւնից։

Օգոստոսի 29-ին առաւօտեան գնացքից որբերին փոխադրեցին հայկական հիւանդանոցը, քանի որ ուրիշ ընակարան չկար որբերին ընդունելու և հիւանդանոցը այդ միջոցին դադարկ էր։ Ինչպէս յիշեցինք որբերի մէջ վարակւածներ կային, որոնք իրանց հերթում վարակել էին միւսներին։ Միւս օրը բժշկական խորհուրդը քննեց բոլոր երեխաներին և գտաւ, որ որբերի 75% հիւանդ է որոնց մէջ կան և այնպիսիները, որոնք միաժամանակ 2—3 հիւանդութիւն ունին։ Վարակիչ հիւանդների համար յատկացրւեց առանձին բաժանմունք։ Տիֆով հիւանդներին տեղաւորեցին նաւթարդիւնաբերողների հիւանդանոցում, իսկ միւս վարակիչ հիւանդութիւն ունեցողներին 4-րդ քաղաքային լազարէթում։ Օգոստոսի 29-ից մինչև հոկտեմբերի 1-ը որբերից մեռել են 20 հոգի (11 տղ., 9 աղջ.)։ Ժամանակի ընթացքում

քում որբերը ընտելացան կեանքի նոր պայմաններին. լաւ սնունդը և բժշկական խնամքը շուտով իրանց բարերար ազդեցութիւնը թողին։ Հոկտեմբերի 1-ին արդէն բոլոր որբերը փոխադրուած էին Հայկաւան և զետեղուած 4 որբանոցներում։ Կարճ միջոցից յետոյ որբերի մէջ հիւանդութիւնը վերանորոգուեց։ Որբանոցներից մէկը յարմարեցրուեց հիւանդանոցի։ Մի ամսից յետոյ հիւանդները կազդուրուեցին և այլ ևս կարիք չզգացուեց մանկական հիւանդանոցի։ Որբերի ճաշը սկիզբը ստացուում էր ընդհանուր գաղթականական ճաշարանից, սակայն 2 ամսուայ վարձից յետոյ որբախնամ յանձնաժողովը աւելի նպատակայարմար գտաւ, որ որբանոցները ունենան իրենց սեփական խոհանոցը։ Հինգ որբանոցները ունին 48 սենեակ, ապակեծածկ պաշտամունքներ, լուացքարան, բաղանիք և այլ յարմարութիւններ։ Ամեն մի որբի յատկացրած է երկաթէ մահճակալ իւր ձմեռային և ամարային պարագաներով, 3 ձեռք սպիտակեղէն, հագուստ, վերարկու, գլխարկ կամ շալ, կօշիկ։ Որբերը շաբաթը մի անգամ լողանում են որբանոցի բաղանիքում և սպիտակեղէնը փոխում։ Սնունդ են ստանում օրեկան 4 անգամ։ Հասակաւոր որբերը օգնում են տնտեսական գործերում. հերթով սենեակները կարգի են բերում, ամանեղէնը լւանում, կողինքը հաւաքում, սեղանը պատրաստում, հարթուկում են սպիտակեղէնը, կարում, կարկատում են, խոհանոցի թեթև գործերը կատարում և այլն։ Մի որբի ծախքը, միջին թւով հաշուելով բոլոր ծախքերը, ամսական եղել է 24 ռուբ. 53, իսկ կառավարութիւնից ստացուում է իւրաքանչիւր որբի համար ամսական 15 ռուբ. և միանուագ գումար ըստ զբնական կազմակերպութեան։ Որբերի թիւը սկիզբը (1915 թ. սեպտեմբ.) եղել է 254։ Մինչև մայիսի 1-ը 1917 թ. ընդունուել է 90 հոգի, մեռել են 25 հոգի, հեռացել են 38 հոգի։

Առ 1 մայիս 1917 թ. որբանոցում գտնուում է 281 որբ, որից 134 տղայ և 147 աղջիկ։

7. Դպրոց.

Բազում գոյութիւն ունեցող հայ ուսուցչական միութիւնը ի նկատի առնելով, որ 500-ի չափ դպրոցական հասակի գաղթական երեխաներ կան Բազում՝ ցանկացաւ թէ բարոյապէս և թէ նիւթապէս օգնել գաղթական երեխաների կրթական գործին։ Ուսուցչական միութեան վարչութիւնը բանակցութիւններ սկսեց այդ խնդրի առթիւ։ Քանի որ յայտնի չէր, թէ կառավարութիւնը թոյլ կը տայ կոմիտէին գաղթականական դպրոց բանալ, անհրաժեշտ էր դպրոցը դնել մի մարմնի հովանաւորութեան ներքոյ ազատ կացուցանելու կառավարութեան անմիջական ոտնձգութիւններից։ Հանգուցեալ Կարապետ

եպիսկոպոսի հաճութեամբ յարմար գտաւեց Հայկաւանում բանալ ծխական դպրոց, ուր բացի տեղացի երեխաներից պիտի ընդունէին գաղթական երեխաներ։ Նիւթականի կողմից դպրոցի գոյութիւնը ապահովուած էր. ըստ նախահաշուի 4000 ռ. խոստացել էր վճարել ուսուցչ. միութիւնը և 6000 ռ. կոմիտէն։ Հայկաւանում ծխական ժողովուրդ գումարուեց, ընտրուեց հոգաբարձութիւն, որը պիտի վարէր դպրոցը։ Ուսուցչ. միութիւնը և կոմիտէն իրանց կողմից ուղարկեցին 2-ական ներկայացուցիչներ հոգաբարձական կազմի մէջ։

1915 թ. նոյեմբերի 2-ին բացուեց դպրոցը, ընդունելով 501 երեխայ, որոնցից տեղացի 42 երեխայ, մնացածները գաղթական երեխայ, 150 տղայ և աղջիկներ էին։ Տարուայ վերջ մնացել է դպրոցում 450 աշակերտ։ Աշակերտութիւնը զետեղուած էր 4 առաջին, 2 երկրորդ, 1 երրորդ, 1 չորրորդ բաժանմունքներում։ Ծրագիրը համապատասխան էր ազգային ծխական դպրոցների ծրագրին։ Ձիւնութեան փոքրութեան պատճառով (6 սենեակ) 2 բաժանմունք ստիպուած էին ճաշից յետոյ պարապել։

Ուսուցչ. խումբը բաղկացած է եղել 12 հոգուց, որից 7-ը գաղթական ուսուցիչներ են, իսկ 5-ը ոչ գաղթական։ Աշակերտներին տրուել է նախաճաշ, հագուստ, կօշիկներ, դասագրքեր և պիտոյքներ։ Դպրոցը ունեցել է և համեստ մանկական գրադարան։ Ներկայ ուսումնական 191⁶/₇ տար. Կոմիտէն ի նկատի առնելով, որ կառավարութիւնը թոյլատրում է գաղթականական դպրոցներ բանալ և ծախքը էլ ինքն պիտի հոգայ (թէպէտ համարեա կոմիտէն ոչինչ չի ստացել) աւելի ընդարձակեց գործը, վարձելով մի երկրորդ շինութիւն։

Ծախքերը ամբողջաւս և դպրոցական ծախքը հասցնելով 18000 ռ. դպրոցական յանձնաժողովի ուր մտնում են ներկայացուցիչներ. 2 հոգի կոմիտէի կողմից, 2 հոգի ուսուցչական միութեան և 2 հոգի գաղթականների կողմից։ Այժմ դպրոցը ունի 4 առաջին բաժանմունք 3 երկրորդ, 2 երրորդ, 1 չորրորդ և 1 հինգերորդ։ Աշակերտութեան թիւը է 507, որից տղայ 275, աղջիկ 232։

Աշակերտաց համար կազմուել է տօնածառ, գիտական զբօսանք, զուարճութիւն։ Դպրոցում տեղի են ունեցել փորձնական դասեր, բեֆերատներ մեթոդների մասին։

8. Հիւանդանոց.

Երբ գաղթականները նոր հասան Բազու, հիւանդների թիւը չափազանց էր և մեռնողների թիւը մեծ։ Կոմիտէն անհրաժեշտ գտաւ անմիջապէս մի հիւանդանոց բանալ գոնէ 50 համար։ Հայ բժշկական

կազմակերպութիւնը ընդ առաջ գալով կազմակերպեց գործը։ Բնակարան վարձուեց, որը միանգամայն հիւանդանոցի յարմարեցրուեց, պատրաստուեց կողինք, սպիտակեղէն, բոլոր անհրաժեշտ պարագաները։ Այնպէս որ հիւանդանոցը, կարելի է ասել, իւր կոչման բարձրութեան վրայ էր դրուած։ Հիւանդանոցը դրուեցաւ հայ բժշկական կազմակերպութեան նախագահական մարմնի հսկողութեան ներքոյ։

Հիւանդանոցը տրամադրում է յիսուն մահճակալ, որ դասաւորուած են 8 սենեակում։ Հիւանդներին յատկացրած սենեակներից զատ՝ հիւանդանոցն ունի մի վիրակապարան դեղանոցով, հիւանդանոցային գրասենեակ, ճերմակեղէնի պահեստարան, դիակատուն, խոհանոց և մի մառան։ Ծառայողների կազմը հետևեալն է. գլխավոր բժիշկ, ֆելդշերուհի, մանկաբարձուհի, 2 գթութեան քոյր, մի տնտեսուհի, մի վերակացու, 5 հիւանդապահ կին, 1 սանիտար, 3 լուացարարուհի, 1 խոհարար, 1 խոհարարի օգնական, 1 աղախին և 1 դռնապան։ Գաղթականներին տրուող բժշկական օգնութիւնը եղել է. ա. հիւանդանոցային, բ. երթևեկ, գ. այցելական.

Հիւանդ գաղթականները երթևեկ օգնութիւն են ստացել Հայկաւանի քաղաքային բուժարանում։ Տներում պառկած հիւանդներին այցելել է այդ բուժարանի գլխաւոր բժիշկը։

1915 թ. հոկտեմբերից մինչև մարտի 1-ը, երբ հիւանդանոցը յանձնուել է քաղաքների միութեան, հիւանդանոցում ընդունել են 437 հոգի (տղամարդ 60, կին 80, երեխայ 293) դուրս են գրուել 352 (տղամարդ 51, կին 58, երեխայ 243), մեռել են 35 (տղամարդ 7, կին 12, երեխայ 16)։ Այդպիսով տղամարդկանց մահացութեան դէպք եղել 11,6%, կանանց 14,8%, երեխայոց 5,4%. Որովհետև հիւանդանոցը կառավարութիւնից նպաստ չէր ստանում, մինչդեռ կոմիտէն այն կարծիքի էր, որ հիւանդանոցը պիտի պահի կառավարութեան հաշուով, ուստի երկար բանակցութիւններից յետոյ կառավարութեան առաջարկութեամբ քաղաքների միութիւնը համաձայնուել էր ընդունել հիւանդանոցը իւր հովանաւորութեան և խմամքի ներքոյ և 1916 թ. մարտի 1-ից հիւանդանոցը յանձնուում է նոցա։

9. Նպաստ խաղաքում եւ Բալախանում գտնուող գաղթականներին.

Թէպէտ կոմիտէն իւր օգնութիւնը հասցնում էր Հայկաւանում ապրող գաղթականներին, սակայն քաղաքում և Բալախանում ապրող գաղթականներից կային այնպիսիները, որոնք կարիք ունէին նպաստի։ 1915 թ. հոկտեմբերից սկսած այդպիսիներին նպաստ է տրուած։ Սկիզբը դոցա թիւը քաղաքում հաւասար էր 27-ի, իսկ վերջերս 98-ի (տղամարդ 23, կին 61, երեխայ 14)։ Բալախանում նպաստ են ստացել 17 հոգի։ Տրուած է դոցա սննդաղրամ, բնակարանի վարձ, հագուստ։

10. Ռուս գաղթականներին նպաստ.

Ի նկատի առնելով, որ Բաքուում չկար յատուկ մարմին, որը ռուս գաղթականներին (ռուսաստանի արևմտեան նահանգներից գաղթած) խնամք տանէր, տեղոյս քաղաքապետը դիմեց կոմիտէին խընդրելով օրապահիկ (պայեօկ) տալ նոցա։ Կոմիտէն նպաստ է տուել 2099 ռուբլի 40 կ. ռուս 145 գաղթականների, (տղամարդիկ 27 հոգի, կանայք 96, երեխայք 22)։

12. Վիճակագրութիւն.

Որպէսզի նպաստի գործը աւելի կանոնաւոր ուղիի վրայ դրած լինէր՝ անհրաժեշտ էր ունենալ թւական տեղեկութիւններ գաղթականների մասին։ Այդ նպատակով կոմիտէն ձեռնարկել է վիճակագրութեան։ Այդ վիճակագրութիւնից դուրս են մնացել քաղաքում և Բալախանում ապրողները։ Գաղթականների ընդհանուր թիւը եղել է մինչև 2500 հոգի։ Ժամանակի ընթացքում դոցանից մի մասը գործի մտնելով, միւս մասը քաղաքից հեռանալով՝ կոմիտէից նպաստ ստացողների թիւը աստիճանաբար նուազել է։ Յունուարին (1916 թ.) նպաստ են ստացել 2412 հոգի, փետրուարին 2412, մարտին 2232, ապրիլին 1886, մայիսին 1886, յունիսին 1325, յուլիսին, օգոստոսին, սեպտեմբերին, հոկտեմբերին, նոյեմբերին և դեկտեմբերին իւրաքանչիւր ամիս 1245, յունվարին (1917 թ.) 1114, փետրուարին 1101, մարտին 1103, ապրիլին 1131 հոգի։

12. Արհեստանոցներ.

Բաքուում գոյութիւն ունեցող «Վասպուրական» հայրենակցական միութիւնը 1916 թ. ամառը բանում է մի արհեստանոց, որի նպատակն է եղել աշխատանք հայթայթել գլխաւորապէս փախստական կանանց, որպէսզի վերջիններս իրանց վաստակած միջոցներով կարողանան ապրել։ Արհեստանոցը ունի 3 բաժանմունք. ա) Մանարան, ուր բուրդ են գզում ու մանում, բ) Կար ու ձև, ուր կարում են շապիկ և վարդիք, գ) Ջուլհականոց, ուր գործում են կտաւ և այլ կտորներ (չայազ, տօք)։ Արհեստանոցում և դուրսը բանողների թիւը միջին թւով 30 է հասնում։

«Վասպուրականի» հայրենակցական միութիւնը դիմում է Կոմի-

տէին խնդրելով նիւթական օժանդակութիւն արհեստանոցի համար։ Կոմիտէն յատկացնում է 600 ռ. Իսկ այս տարի կոմիտէն իւր կողմից ընտրեց մի քանի ներկայացուցիչներ, որոնք «Վասպուրական» հայրենակցական միութեան հետ միասին պիտի աշխատէին արհեստանոցը ընդարձակել, բարւոքել։ Ծախքերի համար յատկացրուեց 10.000 ռուբ. որից 8000 ռ. փոխարինաբար (տարւայ վերջը պիտ դարձնել), իսկ 2000 ռ. օժանդակութիւն։

Հ. Մարդ. Ընկ. կից հայ կանանց կոմիտէն բացել է հաշեայի (կրուժեվա) արհեստանոց Հ. Մ. Ը. շինութեան մէջ։ Նպատակն է եղել հայ գաղթական կնոջ աշխատանքի միջոց տալ։ Արհեստանոցում աշխատւում են օրեկան 14—16 հոգի, իսկ դուրսը 10—15 հոգի, միջին թւով օրեկան աշխատում են 30 հոգի։ Բոլորին տրւում է որոշ վարձատրութիւն համեմատ իրանց աշխատանքի, իսկ արհեստանոցում աշխատողներին բացի ռոճկից տրւում է օրեկան 2 անգամ թէյ և հաց և կէսօրին ճաշ։ Անփորձ աշխատաւորները կառավարչուհու ղեկավարութեամբ կատարելագործւելով թէ արհեստ են ձեռք բերում և թէ աւելի լաւ վարձատրւում։

13. Աշխատանքի բիւրո.

Առողջ գաղթականներին և ինտելիգենտ ոյժերին աշխատանք հայթայթելու նպատակով կոմիտէն կազմակերպեց աշխատատու յանձնաժողով ունենալով ներկայացուցիչներ թէ Բալխանում և քաղաքին կից ուրիշ վայրերում։ Ընդհանուր այդ մասնի գոյութեան յաջողւել է 550-ից աւելի գաղթականների գործ տալ։

14. Գաղթականների վերադարձը.

Աշխատանքի մտած գաղթականներից մեծ մասը, նաև անգործ մնացած առողջ տղամարդիկ՝ ցանկութիւն յայտնեցին (1916 թ. գարնանը) երկիր վերադառնալ։ Սկզբունքով որոշւած էր համոզել, որ ընտանիքներին և երեխաներին չտանեն, բացառութիւն կազմելով նոցա համար, որոնք աւելի նպատակայարմար են գտնում իրանց ընտանիքները թողնել Երևան կամ այլ տեղ, որտեղ գտնւում է ընտանիքի միւս մասը, կամ այնպիսիների համար, որոնց ընտանիքի կազմը բաղկացած է ամուսնուց և կնոջից։ Բացի Բագւի շրջանի գաղթականներից դիւրութիւն տրւեց և Նոր Նախիջևանից Բագւի վրայով երկիր գնացող գաղթականներին։ Գնացողներին տրւում էր ձրի տոմսակ (կառավարութեան կամ կոմիտէի հաշւով) ծախք (ուտելիքի) մինչև Երևան, կամ Ջուլֆա, թողնելով այնտեղի կոմիտէին, ճանապարհը շարունակելու դէպքում, հոգալ նրանց ծախքերը դէպի երկիրը։

15. Համագումար.

Կոմիտէն շարունակ կողմնակից է եղել, որ գաղթականական գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար անհրաժեշտ է գործի ղեկավարութիւնը յանձնւի մի կենդրոնական մարմնի, որը հրահանգ ստանալով իրեն ընտրող մարմիններից համերաշխ և սիստեմատիք ընթացք տայ գործին, Անտարակոյս կենդրոնական մարմին կարող էր ստեղծւել այն տէպքում, երբ կը կազմւէր համագումար, ուր զանազան կոմիտէների ներկայացուցիչները կը մշակեն մի ընդհանուր ծրագիր գործունէութեան։ Այդ տեսակէտով ղեկավարւելով Բագւի կոմիտէն մինչև բանակցել է զանազան կոմիտէների հետ համագումարի խնդիրը իրագործելու։

1916 թ. մայիսին Պետրոգրադում կայացաւ համագումար և Բագւի կողմից իբրև ներկայացուցիչներ մասնակցեցին Ա. Առաքելեան, Ն. Ղարագեոզեան և Վ. Դերոյեան (գաղթական)։ Ինչպէս յայտնի է Ն. Ղարագեոզեան և Վ. Դերոյեան համագումարը ընտրել էր մի մարմին, որը պիտի հոգար երկրորդ համագումարը կայացնելու, որպէս զի վերջինս գործունէութեան ծրագիր մշակէր և կազմէր կենդրոնական ղեկավար մարմին։ Դժբախտաբար այդ համագումարը մինչև օրս էլ չկայացաւ։

16. Կառավարութեան վերաբերմունքը.

Կառավարութիւնը դեռ 1915 թ., երբ գաղթականները հասան Կովկաս, յայտարարել էր, որ Թիֆլիսը և Բագուն գաղթականական վայր չեն և այդտեղ գաղթականները չպիտի ապրեն։ Նոյն իմաստով և գրութիւն էր ուղարկւած Բագւի կոմիտէին։ Այդ կարգադրութիւնը անելանելի դրութիւն էր ստեղծում և գաղթականների և կոմիտէի համար։ Բագւում արդէն գաղթականները ապրում էին, նրանց նորից ձմռան եղանակին տեղահան անելը և ուրիշ վայրերում հաստատւելը կորստաբեր հետևանք կարող էր ունենալ գաղթականների համար։ Միւս կողմից, եթէ կառավարութիւնը չը հաշւէր այն մարի հետ, որ գաղթականները կարող են ապրել Բագւում, կոմիտէն ոչ մի կոպէկ նպաստ չէր կարող ստանալ կառավարութիւնից, իսկ իւր, ժողովրդից հանգանակած գումարներով, անհնարին էր գաղթականներին մինչև գարուն իսկ պահել։

Կոմիտէն սկզբից և եթ դիմեց Կովկասի բարձր իշխանութեան յայտնելով, որ Բագւում ապաստան են գտել գաղթականները և դրա վրայ պէտք է նայել իբրև կատարւած փաստի, միևնոյն ժամանակ խնդրելով, որ գաղթականներին ձմռան ընթացքում տեղահան չանեն, (բացատրելով պատճառները), ուստի թոյլատրել գոնէ մինչև գարուն

մնան Բաքուում, եթէ չի կարելի աւելի երկար թողնել։ Կոմիտէի դիմումները ի վերջոյ յաջողութեամբ պսակուեցին և 1916 թ. յունվարին զեներալ Թամամշեանը յայտնում է, որ գաղթականները կարող են մնալ Բաքուում մինչև մայիսի 1-ը։ Նոր դիմումներով յաջողուեց կոմիտէին այդ միջոցը երկարացնել տալ մինչև յունիսի 1-ը։

Այդպիսով թէ գաղթականները ազատուեցին նոր չարիքներից և թէ կոմիտէն հնարաւորութիւն ստացաւ կառավարութիւնից նպաստ պահանջելու գաղթականների ապրուստի համար։

Մինչև յունիսի 1-ը գաղթականների մի մասը հեռացաւ երկիր, իսկ մեծ մասը մնացել էր։ Կոմիտէն մնացածների համար մի քանի անգամ դիմեց կառավարութեան նպաստ խնդրելով։ Կառավարութիւնը ի նկատի առնելով, որ գաղթականներին թոյլատրուած էր մինչև յունիսի 1.ը մնալ Բաքուում, հրաժարւում էր յունիսից սկսած նպաստները տալ և սեպտեմբերին Թիֆլիսից մի առանձին ասատիճանաւոր ուղարկուեց Բաքու քննելու գաղթականների չհեռանալու պատճառը։ Ասատիճանաւորին հրահանգուած էր միջոցներ ձեռք առնել գաղթականներին Բաքից հեռացնելու։ Կոմիտէն աւեց իւր բացատրութիւնները և կրկին խնդրից թոյլ տալ գաղթականներին մնալ մինչև 1917 թ. գարունը

1917 թ. հոկտեմբերի կիսին զեներալ Թամամշեանը յայտնում է, որ գաղթականներին թոյլատրուած է Բաքուում մնալ, իսկ թէ որքան ժամանակով դեռ որոշուած չէ, սակայն Բաքու եկող նոր գաղթականներին արգելւում է ընդունել և խնամել։ Դորանից յետոյ այլ ևս նոր զրութիւն չի ստացուել։ Պէտք է նկատել, որ գաղթականների Բաքուում մնալը լինելով հակառակ կառավարութեան ցանկութեան այն հետևանքն է ունենում, որ ամիսներով կառավարութիւնից նպաստ չէր ստացւում և կոմիտէն բազմիցս անգամ թէ նախագահի միջոցով անձամբ, թէ զրաւոր դիմել է կամ տեղական իշխանութեան, կամ Կովկասի բարձր իշխանութեան։

Հայ կանանց կոմիտէների աջակցութիւնը.

Գաղթականական գործով զբաղուող Կովկասի վարչութիւնը որոշել էր մեծ քանակութեամբ և կարճ միջոցում գաղթականների համար շորեր, սպիտակեղէն և կողինք պատրաստել։ Ի նկատի առնելով, որ այդքան մեծ քանակութեամբ շորեր պատրաստելը, այն էլ շուտափոյթ մի որ և է կազմակերպութեան ոյժից վեր է, գաղթականական կոմիտէն միջնորդեց, որ պատէրների մի մասը տրւի տեղոյս Հայ կանանց կոմիտէներին։

Գաղթականական գործերին հսկող գլխաւոր լիազօր զեներալ

Թամամշեանը և քաղաքների միութիւնը համաձայնեցին Կոմիտէի առաջարկին. պատէրները կատարուեցին Մարդասիրական Ընկերութեան արհեստանոցում Մարդասիրական Ընկ. կից կանանց կոմիտէի և կանանց միացեալ կոմիտէի ձեռքով։ Պէտք է խոստովանել, ի պատիւ կանանց կոմիտէների, որ պատէրները կատարած են միանգամայն մատչելի գներով և շատ արագ։

Ի գիտութիւն հասարակութեան հաշի մէջ յիշատակուած է կանանց կոմիտէների կողմից ընդունուած և կատարած պատէրի քանակը, արժէքը և ստացած գումարները։

Վերջացնելով մեր համառօտ տեղեկագիրը կարող ենք ասել, որ շնորհիւ հայ հասարակութեան նիւթական զոհաբերութեան, գաղթականների նպաստը միշտ ժամանակին տրւել է։ Կոմիտէն ըստ կարելոյն աշխատել է բաւարարութիւն տալ գաղթականների պահանջներին և այցելու հիւրերի ու գաղթականների վկայութեամբ գաղթականների վիճակը համեմատաբար զոհացուցիչ է եղել։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Публичная Библиотека
7/XI. 1922
ՄԵՍՐՈԲ, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՅԿԱՅԻՆ
Գ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

0

42. 793